



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

---

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

14 հուլիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1  
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի  
Անդամակցությամբ՝ Ա. Պետրոսյանի  
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Փայլակ Հայրապետյանի անհատական դիմումով  
գործը քննության ընդունելու մասին հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝  
քաղաքացի Փայլակ Հայրապետյանը 27.06.2014թ. դիմել է ՀՀ սահմանադրական  
դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը ճանաչել ՀՀ  
Սահմանադրության 6-րդ և 31-րդ հոդվածներին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 246-րդ  
հոդվածի երկրորդ մասը, 255-րդ հոդվածի յոթերորդ կետը և 249<sup>1</sup>-րդ հոդվածը՝ ՀՀ  
Սահմանադրության 31-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդ-  
վածը՝ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության  
օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետը և դրա իրավակիրառ պրակտիկան՝ ՀՀ Սահմա-

նադրության 1-ին, 3-րդ, 91-րդ, 14.1-րդ և 19-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները՝ հանձին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետի, չպարունակելով դատավարական գործընթացում հիմքերի նույնությունն ստուգելու կոնկրետ կառուցակարգ, առաջացնում է դատարանների կողմից կամայականությունների հնարավորություն՝ ոտնահարելով անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ գտնում ենք, որ գործի քննության ընդունումը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմումի և կից փաստաթղթերի, մասնավորապես, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 2013թ. հոկտեմբերի 11-ի թիվ ԵԿԴ 1674/02/13 գործով վճռի ուսումնասիրությունը վկայում է, որ նույն անձանց միջև, միևնույն հիմքերով, նույն առարկայի վերաբերյալ արդեն իսկ առկա է եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտ: Նշված հիմքով էլ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կարճել է գործի վարույթը:

Հարկ է արձանագրել, որ դիմողն իր կողմից վիճարկվող գործով արդեն իսկ մեկ անգամ անցել է դատական երեք աստիճաններով, առկա է վերջնական դատական ակտ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին, որը կայացվել է 2012 թվականի նոյեմբերի 21-ին, սակայն այդ ժամանակ չի իրացրել սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքը:

Փ. Հայրապետյանը երկրորդ անգամ դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան և սպառել դատական պաշտպանության միջոցները: Սույն գործով դատարանը, առաջնորդվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով, կարճել է գործով վարույթը:

Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածը, 246-րդ հոդվածի 2-րդ մասը, 255-րդ հոդվածի 7-րդ կետը, 249<sup>1</sup>-րդ և 305-րդ հոդվածները նրա նկատմամբ դիմումին կից ներկայացված դատական ակտերով չեն կիրառվել: Մինչդեռ համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարանի դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացնել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը՝

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,
- որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է օրենքի դրույթ,
- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարանի դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետին, ապա դիմողը չի ներկայացրել վերջինիս ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ պատշաճ իրավական հիմնավորումներ, մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը, որպես

անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՄԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Բացի դրանից, դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականության հարցը՝ ըստ էության բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության և օրինականության հարց:

Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009թ. մարտի 17-ի ՄԴԱՈ-21 որոշմամբ սահմանած իրավական դիրքորոշման, բոլոր այն դեպքերում, երբ դիմողը ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի

քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

### **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացի Փայլակ Հայրապետյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող**

**Անդամներ**

14 հուլիսի 2014 թվականի  
ՄԴԴԿՈ/1-10